ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ
ԱԿՈՒՆՔ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Ակունք համայնք
ՀՀ, Կոտայքի մարզ, գ. Ակունք, Կենտրոնական խճուղի 72, akunq.kotayq@mta.gov.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

14 ՄԱՐՏԻ 2022թվականի N 17

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ԱԿՈՒՆՔ ՀԱՄԱՅՆՔԻ 2021 ԹՎԱԿԱՆԻ ԲՅՈՒՋԵԻ ԿԱՏԱՐՄԱՆ ՏԱՐԵԿԱՆ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Համաձայն «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 5-րդ կետի,«Բյուջետային համակարգի մասին» օրենքի 35-րդ հոդվածի 3-րդ մասի, համայնքի ավագանին որոշում է՝

1. Հաստատել Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Ակունք համայնքի 2021 թվականի բյուջեի կատարման տարեկան հաշվետվությունը համաձայն հավելվածի

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման օրվանից:

Համայնքի ավագանու անդամներ

Կողմ -5 Դեմ -0 Ձեռնպահ -0

ԱՎԱԳՅԱՆ ԱՎԱԳ

ԳՐԻԳՈՐՅԱՆ ՍԱՄՎԵԼ

ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ ԱՂՎԱՆ

ՄԿՐՏՉՅԱՆ ԳԱՐԻԿ

ՍԻՄՈՆՅԱՆ ԱՐՍԵՆ

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ **Հ. ՌՈՒԲԵՆՅԱՆ**

Հավելված
Ակունք համայնքի ավագանու
2022թվականի մարտի
14-ի թիվ 17 որոշման

Հ Ա Շ Վ Ե Տ Վ Ո Ւ Թ Յ Ո Ւ Ն

ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ԲՅՈՒՋԵԻ ԿԱՏԱՐՄԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

((02/01/21 - 31/12/21)թ. ժամանակահատվածի համար)

1. Համայնքի անվանումը-- Ակունքի համայնքապետարանի
2. Փոստային հասցե
3. Համայնքային տեղաբաշխման մարզը և համայնքի կոդը ըստ բյուջետային ծախսերի
4. Համայնքին սպասարկող Գանձապետական ստորաբա-
ժանման անվանումը-- ՀՀ ՖՆ ԿԳ Գործառնական վարչություն
5. Համայնքի՝ Գանձապետական ստորաբաժանումում հաշվառման համարը
6. Ծախսերի ֆինանսավորման աղբյուրի կոդը՝-- համայնքի բյուջե՝ 2
7. Չափի միավորը՝ *հազար դրամ*

« 14 »մարտի 2022 թ. ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Հ.Ռուբենյան

Կ.Տ.

«Փըրֆեքթ Աուդիտ» ՍՊԸ
Հասցե՝ ՀՀ, ք. Երևան, Տիգրան Մեծի 4
ՀՎՀՀ՝ 02591995
Հեռ./ֆաքս՝ /010/ 524 724

Հ Ա Շ Վ Ե Տ Վ ՈՒ Թ Յ ՈՒ Ն
ՀՀ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ԱԿՈՒՆՔ ՀԱՄԱՅՆՔԻ 2021Թ.Ի ԲՅՈՒՋԵԻ ԿԱՏԱՐՄԱՆ ԿԱՏԱՐՈՂԱԿԱՆԻ ԱՈՒԴԻՏԻ

Ակունք համայնքի ղեկավարի 2021 թվականի դեկտեմբերի 2-ի թիվ 728 որոշմամբ հաստատված Ակունքի համայնքապետարանի ներքին աուդիտի 2022 թվականի տարեկան ծրագրի համաձայն իրականացվել է Ակունքի համայնքապետարանի աշխատակազմի բյուջետավորման գործընթացի, ծախսերի ըստ բյուջետային գործառնական և տնտեսագիտական դասակարգման կատարման կատարողական աուդիտ, որի շրջանակներում ուսումնասիրվել և վերլուծվել է կից ներկայացվող ֆինանսական հաշվետվությունները, որոնք ներառում են 2021 թվականի դեկտեմբերի 31-ի դրությամբ բյուջեի կատարման եկամուտների և ծախսերի հաշվետվությունները:

Վերլուծության արդյունքում պարզվել է, որ բյուջեի կատարման տարեկան հաշվետվությունները բոլոր էական առումներով ճշմարիտ են ներկայացնում բյուջեի կատարման եկամուտների և ծախսերի մասին 2021 թվականի դեկտեմբերի 31-ի դրությամբ իրական պատկերը՝ «Բյուջետային համակարգի մասին» օրենքի պահանջներին համապատասխան:

«ՓԸՐՖԵՔԹ ԱՈՒԴԻՏ» ՍՊԸ-ի տնօրեն՝ Ա. Բաբայան

28 փետրվարի 2022թ.

Կոտայքի մարզի Ակունք համայնքի 2021թ. բյուջեի կատարման տարեկան հաշվետվության կատարողականի աուդիտ

Ակունք համայնքի 2021թ.-ի բյուջեի ամփոփ աղյուսակ եկամուտների գծով

/հազ.դրամ/

Հոդվածների անվանումը	Եկամուտների պլան	Ճշտված պլան	Փաստացի մաս	Շեղում գումարով		
				+	-	%
1. Հարկային եկամուտ	**65300.0**	**82300.0**	**92008.6**	**9708.6**	**0.0**	**111.8%**
ա) անշարժ գույքի հարկ	33600.0	33600.0	37301.0	3701.0		111.0%
բ) գույքային հարկեր այլ գույքից	30000.0	46000.0	51545.8	5545.8		112.1%
գ) տուրքեր	1700.0	2700.0	3161.8	461.8		117.1%
2. Պաշտոնական դրամաշնորհներ	**262038.7**	**313402.9**	**276111.3**	**0.0**	**37291.6**	**88.1%**
ա) դոտացիա	222430.9	222430.9	222430.9			100.0%
բ) սուբվենցիա	39607.8	90972.0	53680.4		37291.6	59.0%
3.Այլ եկամուտներ	**35150.0**	**73647.5**	**59353.9**	**1585.1**	**15878.7**	**80.6%**
ա) գույքի վարձակալությունից եկամուտներ	8700.0	11700.0	12418.5	718.5		106.1%
բ) վարչական գանձումներից	24300.0	57600.0	42771.3		14828.7	74.3%
գ) Մուտքեր տույժերից, տուգանքներից	1450.0	1450.0	400.0		1050.0	27.6%
դ) Կապիտալ ոչ պաշտոնական դրամաշնորհներ		1297.5	1297.5			100.0%
ե) Այլ մուտքեր	700.0	1600.0	2466.6	866.6		154.2%
Ընդամենը	**362488.7**	**469350.4**	**427473.8**	**11293.7**	**53170.3**	**91.1%**

Ակունք համայնքի 2021թ. բյուջեի կատարման ամփոփ աղյուսակ ծախսերի գծով

/հազ.դրամ/

Հոդվածների անվանումը	Ծախսերի պլան	Ճշտված պլան	Փաստացի մաս	Շեղում գումարով		
				+	-	%
1.Ընդհանուր բնույթի հանրային ծառայություններ	211389.9	224990.3	212908.5		12081.8	94.6%
2.Պաշտպանություն	200.0	200.0	0.0		200.0	0.0%
3.Հասարակական կարգ	200.0	2366.0	2165.9		200.1	91.5%
4.Տնտեսական հարաբերություններ	-46588.8	-24961.5	14686.7	39648.2		
5. Շրջակա միջավայրի պաշտպանություն	39700.0	81652.0	70637.0		11015.0	86.5%
6.Բնակարանային շինարարություն և կոմունալ ծառայություն	74396.6	91776.8	66319.7		25457.1	72.3%
7.Առողջապահություն	0.0	0.0	0.0			
8.Հանգիստ, մշակույթ և կրոն	20100.0	35518.6	25529.7		9988.9	71.9%
9.Կրթություն	43200.0	70197.5	59884.0		10313.5	85.3%
10.Սոցիալական պաշտպանություն	13000.0	7400.0	7030.0		370.0	95.0%
11.Հիմնական բաժիններին չդասվող պահուստային ֆոնդեր	26680.2	0.0	0.0			
Ընդամենը	**382277.9**	**489139.7**	**459161.5**	**39648.2**	**69626**	93.9%

Բյուջետային միջոցների ազատ մնացորդը 31.12.2021թ. կազմել է 22387.4 հազար դրամ ֆոնդային մասով և 5322.1 հազար դրամ՝ վարչական մասով:

Եկամուտներ

2021 թվականին համայնքի բյուջեով նախատեսված մի շարք եկամտատեսակների գծով հավաքագրումներ չեն կատարվել, որոնց վերաբերյալ ղեկավարության կողմից ներկայացվել են հետևյալ բացատրություններն ու դիտարկումները.

1) Պաշտոնական դրամաշնորհներ (սուբվենցիա)՝ /59.0%/ 37 291 600 ՀՀ դրամ

   Եղանակային անբարենպաստ պայմաններից ելնելով, Սևաբերդ բնակավայրի ջրամատակարարման աշխատանքների ժամկետների երկարաձգմամբ պայմանավորված և ավարտական ակտը չներկայացնելու պատճառով՝ սուբվենցիոն գումարի մնացորդը և վճարումը 2021թ.-ից տեղափոխվել է 2022թ:

2) Այլ եկամուտներ (վարչական գանձումներից)՝ /74.3%/ 14 828 700 ՀՀ դրամ

   Covid-19 համավարակի կանխարգելման միջոցառումների հետ կապված համայնքի մանակապարտեզը 2021թ-ին իր գործունեությունն իրականացրել է ոչ ամբողջ ծավալով, որի հետևանքով 9300,0 հազար դրամի փոխարեն ծնողական վճար է մուտքագրվել 6577,0 հազար դրամ

   Համայնքի բնակչության կողմից աղբահանության վճարների ոչ ժամանակին և պատշաճ վճարումները կատարելու հետևանքով 9000,0 հազար դրամի փոխարեն համայնքի բյուջե է մուտքագրվել 8207,1 հազար դրամ գումար:

   Քանի որ «Ինքնակամ կառուցված շենք,շինությունների օրինակացման վճար» գանձույթը օրենքով սահմանված պարտադիր վճար է, սակայն իրականում անկանխատեսելի բնույթ կրող եկամուտ է, ուստի համայնքի բյուջե 36000,0 հազար դրամի փոխարեն մուտքագրվել է 23955,8 հազար դրամ:

3) Այլ եկամուտներ (մուտքեր տույժերից, տուգանքներից)՝ /27.6%/ 1 050 000 ՀՀ դրամ:

   Այլ եկամուտներից մուտքերի թերակատարումը պայմանավորված է համայնքի կողմից թվով քիչ բացահայտած անօրինական կառուցված շինությունների համար վարչական տուգանքներից:

Ծախսեր

2021 թվականին ըստ գործառնական դասակարգման ներքոհիշյալ ծրագրերով նախատեսված մի շարք ծախսեր չեն կատարվել, որոնց վերաբերյալ ղեկավարության կողմից ներկայացվել են հետևյալ բացատրություններն ու դիտարկումները.

1) Շրջակա միջավայրի պաշտպանություն՝ /86,5%/ 11 015 000 ՀՀ դրամ

Առկա 10888,0 դրամի տարբերությունը արդյունք է նախատեսված տեխնիկայի գնման գործընթացը չիրականացնելու, իսկ 127,0 դրամ տարբերությունը՝ բնապահպանական վճարի չափից ավել նախատեսված լինելու պատճառով:

2) Բնակարանային շինարարություն և կոմունալ ծառայություն՝ /72.3%/ 25 457 100 ՀՀ դրամ

Նախատեսված էր կառուցել Սևաբերդ բնակավայրի ՕԿՋ-ն, ինչպես նաև բարելավել բնակավայրերի ջրամատակարարման համակարգերը, սակայն նախահաշվային փաստաթղթերի և ներկայիս շուկայական գների բավականին մեծ տարբերության պատճառով հնարավոր չեղավ լրացուցիչ ֆինանսական միջոցների տրամադրումը ուստի և չիրականացվեց աշխատանքը՝ 12504.0 հազար դրամ գումարով:

Իսկ փողոցային լուսավորություն ծրագրում նախատեսված 12953,1 դրամի տարբերությունը արդյունք է գնման գործընթացների հետ կապված տնտեսումների առաջացումից:

3) Հանգիստ, մշակույթ և կրոն՝ /71.9%/ 9 988 900 ՀՀ դրամ

Համայնքի բյուջեում նախատեսված 9988.9 հազար դրամ գումարը չի ծախսվել համապատասխան ուղղություններով՝ մշակույթի տների կապ վերանորոգման աշխատանքների իրականացման մասով, քանի որ տարեվերջին պետական բյուջեի ծրագրերին ներկայացված հայտերը մասամբ ընթացք ստացան, ուստի որոշվեց աշխատանքները իրականացնել 2022 թվականին :

4) Կրթություն՝ /85.3%/ 10 313 500 ՀՀ դրամ

Նոր Գյուղ բնակավայրի մանկապարտեզի կառուցման համար նախտեսված 10313.5 դրամ գումարը չի օգտագործվել գնման գործընթացի չիրականացման հետևանքով, կապված տեղանքի կոմունիկացիոն անհարամարության հետ:

«ՓԵՐՖԵՔԹ ԱՈՒԴԻՏ» ՍՊԸ-ի
տնօրեն՝ Ա. Բաբայան